ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ե՞րբ է գահակալել Երվանդ Վերջինը.**

1) Ք. ա. մոտ 240–220 թթ.
2) Ք. ա. մոտ 580–570 թթ.
3) Ք. ա. մոտ 260–240 թթ.
4) Ք. ա. մոտ 220–201 թթ.

2 **Ե՞րբ է Հայաստանում սկսվել հելլենիզմի դարաշրջանը.**

1) Ք. ա. I դարից
2) Ք. ա. V դարից
3) Ք. ա. III դարից
4) Ք. ա. II դարից

3 **Ո՞րն է Հայոց Մեծ թվականի սկիզբը.**

1) Ք. ա. 2492 թ. օգոստոսի 11
2) 552 թ. հուլիսի 11
3) 554 թ. օգոստոսի 11
4) 506 թ. հուլիսի 11

4 **Ե՞րբ է կառավարել հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին.**

1) 826–851 թթ.
2) 804–826 թթ.
3) 855–885 թթ.
4) 850–855 թթ.

5 **Ե՞րբ է լորդ Ջ. Բրայսը հրատարակել հայերի բնաջնջման վերաբերյալ փաստաթղթերի և նյութերի ժողովածու.**

1) 1920 թ.
2) 1916 թ.
3) 1917 թ.
4) 1918 թ.

6 **Ե՞րբ է կնքվել Գյուլիստանի հաշտության պայմանագիրը.**

1) 1812 թ. սեպտեմբերի 4–ին
2) 1813 թ. հունիսի 12–ին
3) 1813 թ. հոկտեմբերի 12–ին
4) 1812 թ. մայիսի 16–ին

7 **Ե՞րբ է Ադրբեջանը ղարաբաղա–ադրբեջանական պատերազմի դադարեցման խնդրանքով դիմել Ռուսաստանին և Մինսկի խմբին.**

1) 1994 թ. մայիսին
2) 1991 թ. մայիսին
3) 1992 թ. մայիսին
4) 1993 թ. մայիսին

8 **Ե՞րբ ահաբեկչության զոհ դարձավ «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքը Ստամբուլում.**

1) 2008 թ. հոկտեմբերի 10–ին
2) 2007 թ. հունվարի 19–ին
3) 2007 թ. ապրիլի 10–ին
4) 2008 թ. սեպտեմբերի 6–ին

9 **Մեծ Հայքի ո՞ր նահանգն է կոչվել Չորրորդ Հայք.**

1) Բարձր Հայք
2) Աղձնիք
3) Կորդուք
4) Ծոփք

10 **Ո՞վ է հատել մեզ հասած առաջին հայկական արքայական դրամները.**

1) Արշամ
2) Երվանդ I
3) Երվանդ II
4) Շամ (Սամոս)

11 **Ո՞ր գավառը չէր մտնում ռուս–թուրքական 1877–1878 թթ. պատերազմից հետո ձևավորված Կարսի մարզի մեջ.**

1) Կարս
2) Օլթի
3) Ալաշկերտ
4) Կաղզվան

12 **Ո՞վ է կերտել Խաչատուր Աբովյանի հուշարձանը.**

1) Գևորգ Բաշինջաղյանը
2) Անդրեաս Տեր–Մարուքյանը
3) Երվանդ Ոսկանը
4) Եղիշե Թադևոսյանը

13 **Որքա՞ն էր 1921–1936 թթ. Հայաստան ներգաղթածների ընդհանուր թիվը.**

1) 42 հազար
2) 90 հազար
3) 51 հազար
4) 23 հազար

14 **Ո՞ր խորհրդաժողովը հավանություն տվեց Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիայի հետ կնքվելիք խաղաղության պայմանագրի նախագծին.**

1) Սան Ռեմոյի
2) Փարիզի
3) Սևրի
4) Լոնդոնի

15 **Հայոց ո՞ր թագավորի ժամանակ էր գործում սպարապետ Վաչե Մամիկոնյանը.**

1) Տիրան
2) Պապ
3) Արշակ II
4) Խոսրով Կոտակ

16 **Բագրատունի ո՞ր արքայի օրոք է առաջացել Սյունիքի թագավորությունը.**

1) Գագիկ I–ի
2) Աշոտ III–ի
3) Սմբատ II–ի
4) Աբասի

17 **Ո՞ւմ որոշումից է մեջբերված հատվածը.**

«Պատրաստ լինել իշխանությունը գրավելու, երբ նեցուկ կունենանք մի հարևան երկիր, որով հնարավոր կլինի կապվել բանվորագյուղացիական Ռուսաստանի հետ»:

1) Ռազմահեղափոխական կոմիտեի Կարսի կոնֆերանսի
2) Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների՝ Երևանում հրավիրված առաջին կոնֆերանսի
3) հայ բոլշևիկների Բաքվի նիստի
4) հայ բոլշևիկների Ալեքսանդրապոլի կոմիտեի

18 **Ո՞ր արքայի մասին է պատմիչի ստորև բերվող վկայությունը.**

«Սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանց բոլորից քաջ…և մեր բնակության սահմաններն ընդարձակելով՝ հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը»:

1) Տիգրան I Երվանդյանի
2) Արտաշես I–ի
3) Տրդատ III Արշակունու
4) Երվանդ Սակավակյացի

19 **Հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը, ըստ «Որոգայթ փառացի», կոչվում էր՝**

1) Հայոց կառավարություն
2) Հայոց խորհրդարան
3) Հայոց ազգային ժողով
4) Հայոց տուն

20 **ՀՍԽՀ օրենսդիր իշխանության բարձրագույն մարմինը, որ գործում էր խորհուրդների համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում, կոչվում էր՝**

1) Ժողկոմխորհ
2) ՌՀԿ
3) Կենտկոմ
4) Կենտգործկոմ

21 **Ինչո՞ւ արգելվեց հայկական մեհենագրության կիրառումը.**

1) քանի որ այն դժվար էր կիրառել
2) քանի որ հունարենն ու ասորերենը ավելի լայն տարածում գտան ժողովրդի շրջանում
3) քանի որ քրիստոնեությունը հռչակվել էր պետական կրոն
4) քանի որ ստեղծվել էր հայոց այբուբենը

22 **Ի՞նչն էր ամբողջ Անդրկովկասում իրադրության կտրուկ փոխվելու պատճառը 1920 թ. ապրիլի վերջին.**

1) Ադրբեջանի խորհրդայնացումը
2) հայ–ռուսական բանակցությունների սկսվելը Մոսկվայում
3) թուրք–հայկական պատերազմում Հայաստանի պարտությունը
4) թուրքական զորքերի ներխուժումը Անդրկովկաս

23 **Կիլիկյան Հայաստանի հայոց իշխանների անունները դասավորել ըստ գահակալման ժամանակագրական հաջորդականության.**

ա. Մլեհ
բ. Լևոն II
գ. Լևոն I
դ. Ռուբեն III
ե. Թորոս II

1) ա, ե, գ, բ, դ
2) գ, ե, ա, դ, բ
3) դ, ա, գ, ե, բ
4) գ, ա, ե, բ, դ

24 **Թվարկված քաղաքական կուրսերը դասավորել ըստ դրանց գործադրման սկզբի ժամանակագրական հաջորդականության.**

ա. գյուղատնտեսության կոլեկտիվացում
բ. վերակառուցում
գ. արդյունաբերացում
դ. ռազմական կոմունիզմ

1) գ, ա, բ, դ
2) դ, ա, գ, բ
3) դ, գ, ա, բ
4) դ, բ, ա, գ

25 **Գահակալման տարիները համապատասխանեցնել Վանի թագավորության արքայի անվանը.**

1. Սարդուրի II	ա. Ք. ա. 786–764 թթ.
2. Ռուսա II	բ. Ք. ա. 735–մոտ 710–ական թթ.
3. Արգիշտի I	գ. Ք. ա. 764–735 թթ.
4. Ռուսա I	դ. Ք. ա. մոտ 685–645 թթ.
	ե. Ք. ա. 810–786 թթ.

1) 1–գ, 2–դ, 3–ա, 4–բ
2) 1–ե, 2–բ, 3–ա, 4–դ
3) 1–ա, 2–դ, 3–գ, 4–ե
4) 1–գ, 2–դ, 3–բ, 4–ա

26 **Կատարել համապատասխանեցում.**

Մականուն	Անուն–ազգանուն
1. Մեծն Մուրադ	ա. Սերոբ Վարդանյան
2. Հրայր Դժոխք	բ. Համբարձում Պոյաջյան
3. Գարուն Աղասի	գ. Սարգիս Մեհրաբյան
4. Նեմրութի հսկա	դ. Կարապետ Թուր–Սարգսյան
5. Նիկոլ Դուման	ե. Արմենակ Ղազարյան
	զ. Նիկողայոս Տեր–Հովհաննիսյան

1) 1–բ, 2–գ, 3–դ, 4–ա, 5–ե
2) 1–գ, 2–ե, 3–դ, 4–բ, 5–զ
3) 1–բ, 2–ե, 3–դ, 4–ա, 5–զ
4) 1–գ, 2–դ, 3–զ, 4–ա, 5–ե

27 **Ո՞ր շարքի բոլոր մայրաքաղաքներն են գտնվել Այրարատ նահանգում.**

1) Երևան, Անի, Արտաշատ, Դվին, Արմավիր, Վան, Երազգավորս, Վաղարշապատ, Երվանդաշատ, Բագարան
2) Արմավիր, Բագարան, Արտաշատ, Երվանդաշատ, Վաղարշապատ, Կարս, Տիգրանակերտ, Անի, Դվին, Երևան
3) Երևան, Անի, Արտաշատ, Դվին, Արմավիր, Կարս, Վաղարշապատ, Երվանդաշատ, Վան, Բագարան
4) Արմավիր, Բագարան, Արտաշատ, Երվանդաշատ, Վաղարշապատ, Կարս, Երազգավորս, Անի, Դվին, Երևան

28 **Ե՞րբ է Թեոդորոս Ռշտունին վերամիավորել Հայաստանը.**

1) 652 թ.
2) 639 թ.
3) 642 թ.
4) 650 թ.

29 **Ե՞րբ է Անդրանիկի ջոկատը գրավել Բիթլիսը.**

1) 1916 թ. փետրվարի 7–ին
2) 1916 թ. մայիսի 15–ին
3) 1916 թ. ապրիլի 16–ին
4) 1916 թ. ապրիլի 7–ին

30 **Արտաշես II–ը ո՞ր թագավորությունն է միացրել Հայոց թագավորությանը.**

1) Կոմմագենեն
2) Կապադովկիան
3) Ծոփքը
4) Ատրպատականը

31 **Հայ զորահրամանատարներից ո՞վ է Հայրենական պատերազմի տարիներին եղել ռազմաճակատի հրամանատար.**

1) Բագրատ Առուշանյան
2) Համազասպ Բաբաջանյան
3) Հովհաննես Բաղրամյան
4) Միքայել Պարսեղով

32 **Հայոց ո՞ր արքան է ներկայացրել հետևյալ տարածքային պահանջները.**

«... հնում Կեսարիայի ուրիշ տասը քաղաք մերն են եղել, է՛տ տուր, Ուռհա (Եդեսիա) քաղաքն էլ մեր նախնիքն են շինել, ուստի, եթե չես ուզում, որ խռովություն ծագի մեր մեջ, է՛տ տուր»:

1) Խոսրով III
2) Պապ
3) Արշակ II
4) Տիրան

33 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.**

«...Եվրոպայում օձ սնուցելով՝ զրկվեցինք Բուլղարիայից. որպեսզի նույնը տեղի չունենա Ասիայում, անհրաժեշտ է բնաջնջել հայությանը»:

1) Զեքի փաշան
2) Աբդուլ Համիդը
3) Քյամիլ փաշան
4) Թալեաթ փաշան

34 **Ի՞նչ էին կոչվում զրադաշտական կրոնի սպասավորները.**

1) մոգ
2) քահանա
3) քուրմ
4) երեց

35 **Տրված պնդումներից առանձնացնել երկուսը, որոնք Սսից Էջմիածին կաթողիկոսական աթոռի փոխադրման հետևանքներից են.**

ա. Ավելի բարձրացավ Այրարատյան աշխարհի ազգային քաղաքական դերը:
բ. Կաթողիկոսությունը պաշտպանվեց խաչակիրների հալածանքներից:
գ. Կարևոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդի հետագա համախմբման համար:
դ. Այն միջնորդի դեր ստանձնեց մահմեդական ամիրայությունների միջև:

1) ա, գ
2) ա, բ
3) բ, դ
4) բ, գ

36 **1890–ական թթ. հայ ազատագրական պայքարի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Զեքի փաշայի զորքի շարժվելը Սասունի վրա
բ. Բաբշենի հաղթական կռիվը
գ. Գում Գափուի ցույցը
դ. Մ. Ավետիսյանի գլխավորությամբ Վանի ինքնապաշտպանությունը
ե. Կուկունյանի արշավանքը
զ. Խանասորի արշավանքը

1) գ, ա, զ, դ, բ, ե
2) գ, ե, դ, զ, ա, բ
3) զ, բ, գ, ա, դ, ե
4) գ, ե, ա, դ, զ, բ

37 **Պատմական իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Անիի հռչակումը մայրաքաղաք
բ. Տուղրիլի արշավանքը Հայաստան
գ. Ծումբի ճակատամարտը
դ. մոնղոլների առաջին արշավանքը Հայաստան
ե. Բուղայի արշավանքը Հայաստան

1) գ, ե, ա, բ, դ
2) ա, դ, ե, գ, բ
3) ե, դ, ա, գ, բ
4) ե, ա, գ, բ, դ

38 **Կատարել համապատասխանեցում.**

Անուն	Պաշտոն
1. Ա. Վոլսկի	ա. ՀԿԿ կենտկոմի քարտուղար
2. Ա. Խանջյան	բ. ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար
3. Ն. Ռիժկով	գ. ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ
4. Յ. Զարոբյան	դ. ԼՂԻՄ–ում հատուկ կառավարման կոմիտեի նախագահ
5. Հ. Պողոսյան	ե. ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար
	զ. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ

1) 1–գ, 2–ա, 3–զ, 4–ե, 5–դ
2) 1–դ, 2–ե, 3–գ, 4–ա, 5–բ
3) 1–դ, 2–ա, 3–զ, 4–ե, 5–բ
4) 1–զ, 2–ա, 3–գ, 4–բ, 5–դ

39 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Արքունի եկամուտներն ու ծախսերը տնօրինող պաշտոնյան Կիլիկյան Հայաստանում կոչվում էր պայլ:
2) Հայր մարդպետ կոչվում էր արքունի թիկնազորի հրամանատարը:
3) Արշակունյաց Հայաստանում արքունիքը կոչվում էր երիցանի:
4) Բագրատունիների ժամանակաշրջանում բուն քաղաքը կոչվում էր շահաստան:
5) Բագրատունյաց Հայաստանում հարկահանությանը, շուկաներին, առևտրին, արհեստներին հետևող հատուկ պաշտոնյան կոչվում էր մուհթասիբ:

40 **Ի՞նչ պատճառներով 1896 թ. ինքնապաշտպանական կռիվների մասնակից վանեցիներն ընդունեցին անգլիական հյուպատոսի միջնորդությունը.**

1) փախստականների ներհոսքի հետևանքով առաջացած անմխիթար վիճակի
2) զինամթերքի պակասի
3) հայկական ուժերի շրջանում սկիզբ առած բախումների
4) հայերի կոտորածը անհապաղ դադարեցնելու կառավարական հրամանը հաշվի առնելու
5) թուրքական իշխանությունների՝ զինված վանեցիների անարգել անցումը Կիլիկիա ապահովելու խոստման

41 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) ԱԽՍՀԴՄ–ն գոյատևեց մինչև 1936 թվականը:
2) «Ստալինյան ինքնավարացման ծրագրին» հավանություն տվեցին խորհրդային բոլոր հանրապետությունների կոմկուսները:
3) ԽՍՀՄ–ը իրականում ոչ թե դաշնային միություն էր, այլ միաձույլ կենտրոնացված պետություն:
4) Վրաստանի հեղկոմի նախագահ Պ. Մդիվանին և իր կողմնակիցները գտնում էին, որ Անդրկովկասի Դաշնություն ստեղծելու համար կան իրական նախադրյալներ և կողմ էին դրա ստեղծմանը:
5) Հայաստանի իշխանությունները դեմ էին Անդրդաշնության ստեղծմանը, որովհետև այն հնարավորություն չէր տա երկիրը ու ժողովրդին արտաքին վտանգներից պաշտպանելու և հասարակական–տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու:
6) Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարն ընդունեց ԱԽԴԱՀ Սահմանադրությունը և որոշեց մյուս խորհրդային հանրապետությունների հետ միավորվել ԽՍՀՄ–ի կազմում:

42 **1915 թ. իրադարձություններից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Մուսա լեռան հերոսամարտը
2) Շապին–Գարահիսարի ինքնապաշտպանության սկիզբը
3) Հնչակյան կուսակցության 20 գործիչներին՝ Փարամազի գլխավորությամբ, կախաղան բարձրացնելը
4) Մուշի ինքնապաշտպանության սկիզբը
5) Ուրֆայի հերոսամարտի ավարտը

43 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Վաղարշ II–ի և հռոմեական կայսր Սևերոսի միջև հաշտության կնքումը
2) Գառնիի ամրոցի կառուցումը
3) Սասանյան արքայատոհմի հիմնումը
4) հայոց Արշակ I արքայի գահակալումը
5) Տրդատ III–ի վերջնականապես հաստատվելը Մեծ Հայքի թագավորության գահին

44 **Պատմիչների անունները համապատասխանեցնել աշխատությունների վերնագրերին.**

ա. «Վարք Մաշտոցի»	1. Ագաթանգեղոս
բ. «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին»	2. Մատթեոս Ուռհայեցի
	3. Եղիշե
գ. «Պատմութիւն Հայոց»	4. Թովմա Արծրունի
դ.«Ժամանակագրություն»	5. Ստեփանոս Տարոնեցի
ե. «Տիեզերական պատմություն»	6. Կորյուն

ա	
բ	
գ	
դ	
ե	

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ պատասխաններից որևէ մեկը:**

1) Հայրենիքի դավաճանության անհիմն մեղադրանքով 1945 թ. վերջերին ձերբակալվել է ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խանփերյանց):
2) Աղասի Խանջյանը տասը տարի ղեկավարել է Հայաստանի կոմկուսը:
3) Երկրորդ աշխարհամարտում առաջին հայ հերոսը Կարապետ Սիմոնյանն էր:
4) Հայրենական մեծ պատերազմի ժամանակ հայկական ազգային դիվիզիաներից առաջինը կռվի դաշտ է մեկնել 51–րդ գվարդիական դիվիզիան:
5) Բալթիկայի համար 1944 թ. մղված մարտերից մեկում է զոհվել ԽՍՀՄ հերոս Նելսոն Ստեփանյանը:
6) Ստալինյան բռնաճնշումների զոհ են դարձել հայ զորահրամանատարներ Հայկ Բժշկյանցը, Ստեփան Շահումյանը, Գրիգոր Հարությունյանը և ուրիշներ:

Բ մակարդակ

46 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. Աստվածային գերագույն եռյակի պաշտամունքը բնիկ հնդեվրոպական երևույթ է և հայոց մեջ ունի վաղնջական ակունքներ:
բ. Դարեհ III Կոդոմանոսը Հայաստանի սատրապ եղած ժամանակ հայտնի էր Արտաշատ անունով:
գ. Աստղիկը հայոց դիցարանում մեծարվել է «Ոսկեմայր» տիտղոսով:
դ. Փարպեցին Արտաշես I–ի ստեղծած վարչական միավորներն անվանում է ստրատեգիաներ, իսկ դրանց կառավարիչներին՝ ստրատեգոսներ:
ե. Որոշ ուսումնասիրողների կարծիքով Անահիտը եղել է նաև ռազմի դիցուհի:
զ. Վանի թագավորությունում հայտնի էին «սահմանապահ կուսակալ», «աշխարհակալ», «գավառակալ» անուններով գործակալություններ:
է. Դարեհ II–ի ստեղծած վարչական միավորները կոչվում էին սատրապություններ:

1) ա, դ, է
2) բ, գ, զ
3) ա, բ, զ
4) ա, դ, ե

47 **Հասկացությունը համապատասխանեցնել իր բացատրությանը.**

1. Կիլիկյան Հայաստանի բանակի ընդհանուր հրամանատարը
2. զինվորական աստիճան Կիլիկիայում, որը ստանալու համար անհրաժեշտ էր քննություն հանձնել ձիավարությունից, նետաձգությունից, նիզակի և սրի գործածությունից և այլ անհրաժեշտ գիտելիքներից և հմտություններից
3. արքունական հեծելազորի հրամանատարը Կիլիկիայում
4. կիլիկյան բանակի սպառազինության և պարենի մատակարարման ղեկավարը
5. պատերազմի ժամանակ գյուղացիներից և քաղաքացիներից հավաքագրվող զորք

ա. մարաջախտ	դ. կապիտան
բ. սպասալար	ե. ասպետ (ձիավոր)
գ. աշխարհազոր	զ. գունդստաբլ

1) 1–ա, 2–դ, 3–բ, 4–զ, 5–գ
2) 1–զ, 2–ե, 3–բ, 4–ա, 5–գ
3) 1–գ, 2–ե, 3–դ, 4–բ, 5–զ
4) 1–զ, 2–դ, 3–ա, 4–բ, 5–գ

48 **Թվարկվածներից որո՞նք են ներկայացնում 1890–ական թվականների հայերի զանգվածային կոտորածների հետևանքներ.**

ա. Ոչնչացվեց մոտ 300 հազար հայ:
բ. Գերմանական կառավարությունը ստանձնեց որբ մնացած հայ երեխաների խնամքը:
գ. Հայերն ամբողջությամբ ոչնչացվեցին անգամ Կ. Պոլսում և Զմյուռնիայում:
դ. Հայերի ժառանգները պահպանեցին իրենց ունեցվածքը:
ե. 100 հազար հայ գաղթեց Ռուսաստան, 200 հազարը՝ Եվրոպա և Ամերիկա:
զ. Արևմտահայ բազմաթիվ գավառներ հայաթափվեցին և բնակեցվեցին քրդերով ու թուրքերով:
է. Տեղահանված հայերը բնակեցվեցին Միջագետքի ապահով շրջաններում:

1) գ, ե, զ
2) ա, գ, է
3) ա, ե, զ
4) բ, դ, է

49 **Թվարկվածներից որո՞նք 1921 թ. Փետրվարյան ապստամբության արդյունքներից չեն.**

ա. Խորհրդային իշխանությունը ստիպված էր առավել զգուշորեն գործել:
բ. Բանտերից ազատվեցին բոլշևիկների կողմից ձերբակալված և խոշտանգված հարյուրավոր մարդիկ:
գ. Ապստամբության ղեկավարները ենթարկվեցին առավելագույն պատժի՝ գնդակահարության:
դ. Ապստամբության բոլոր մասնակիցներին, ներառյալ ղեկավարներին, շնորհվեց համաներում:
ե. Հայկական բանակի աքսորված սպաներին ազատ արձակեցին:
զ. Հայկական բանակի աքսորից ազատված սպաներին թույլ չտրվեց վերադառնալ Հայաստան:
է. Ամրապնդվեց ռազմական կոմունիզմի քաղաքականությունը:
ը. Վճռական քայլեր ձեռնարկվեցին երկրի սոցիալ–տնտեսական դրությունը բարելավելու ուղղությամբ:

1) գ, զ, է
2) բ, դ, է
3) ա, դ, ե
4) գ, զ, ը

50 **Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ներսեհապատի
բ. Ձիրավի
գ. Ակոռիի
դ. Խաղխաղի
ե. Արածանիի
զ. Մագնեսիայի
է. Հռանդեայի
ը. Տիգրանակերտի
թ. Գավգամելայի
ժ. Խառանի

1) թ, է, ը, զ, ժ, ե, գ, բ, ա, դ
2) է, ը, թ, զ, ե, ժ, դ, գ, ա, բ
3) թ, զ, ը, ե, է, ժ, դ, գ, բ, ա
4) թ, զ, ը, ե, ժ, է, բ, դ, գ, ա

51 **1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմի իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել երրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Օշականի ճակատամարտը
բ. Շուշիի բերդի պաշարումը պարսիկների կողմից
գ. Սարդարապատի գրավումը ռուսների կողմից
դ. Շամքորի ճակատամարտը
ե. Երևանի գրավումը ռուսների կողմից
զ. Գանձակի ճակատամարտը
է. Թավրիզի գրավումը ռուսների կողմից
ը. Հայ կամավորական գումարտակների կազմակերպումը
թ. Խոյի, Սալմաստի, Ուրմիայի և Մարաղայի գրավումը ռուսների կողմից
ժ. Աբասաբադի բերդի գրավումը ռուսների կողմից

1) բ
2) զ
3) թ
4) ժ

52 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. կիմերների առաջին թշնամական արշավանքը Վանի տերության դեմ
բ. Վանի զորքերի կողմից Կեխունի գավառի գրավումը
գ. Ասորեստանի արքա Սինաքերիբի սպանությունը
դ. Թիգլաթպալասար III–ի արշավանքը Տուշպա (Վան)
ե. Արդինի–Մուսասիրի տաճարի թալանումը ասորեստանցիների կողմից
զ. Մանայի համար Ասորեստանի և Ուրարտուի միջև պայքարի վերածվելը վճռական պատերազմի
է. Արգիշտի I–ի արշավանքը Հյուսիսային ծովակի ավազան
ը. Սարդուրի III–ի հիշատակվելը ասորեստանյան արձանագրություններում

1) բ, է, դ, զ, ա, ե, գ, ը
2) բ, է, դ, ա, զ, գ, ը, ե
3) բ, դ, է, ա, զ, գ, ե, ը
4) է, բ, գ, դ, ա, ը, զ, ե

53 **Կատարել համապատասխանեցում.**

Գործիչ	Կառավարման ժամանակաշրջան
1. Վռամշապուհ	ա. 456–502 թթ.
2. Շապուհ	բ. 388–414 թթ.
3. Արտաշես Արշակունի	գ. 415–419 թթ.
4. Հազկերտ II	դ. 439–452 թթ.
5. Հովսեփ Ա Վայոցձորցի	ե. 439–457 թթ.
6. Գյուտ կաթողիկոս	զ. 461–478 թթ.
7. Վախթանգ Գորգասալ	է. 414–415 թթ.
	ը. 422–428 թթ.

1) 1–բ, 2–դ, 3–ե, 4–զ, 5–ը, 6–գ, 7–ա
2) 1–բ, 2–գ, 3–ը, 4–ե, 5–դ, 6–զ, 7– ա
3) 1–գ, 2–ը, 3–բ, 4–ե, 5–դ, 6–է, 7–զ
4) 1–ե, 2–բ, 3–ա, 4–դ, 5–է, 6–գ, 7–զ

54 **Բերված փաստերից ընտրել երեքը, որոնք տեղ են գտել «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքում.**

ա. Ներկայացված է ապագա պետության կառավարման համար նախատեսված օրենքների հավաքածու:
բ. Ներկայացված է խորհրդարանական հանրապետություն ստեղծելու ծրագիր:
գ. Ներկայացված է ապագա պետության բարձրագույն գործադիր իշխանության կառուցվածքը:
դ. Ներկայացված են հայ ժողովրդի հերոսական անցյալը, նրա աշխարհագրական լայնարձակ սահմանները:
ե. Ներկայացված է ապագա պետության բարձրագույն օրենսդիր իշխանության կառուցվածքը:
զ. Գիրքը կոչ է անում հայ երիտասարդներին դուրս գալու օտար բռնակալների դեմ և զենքի ուժով հասնելու ազատության:
է. Քննադատվում է միապետական կարգը՝ այն համարելով հայոց պետականության անկման պատճառներից մեկը:

1) բ, զ, է
2) ա, ե, զ
3) գ, դ, ե
4) դ, զ, է

55 **Բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. Դավիթ բեկի մահից հետո Կապանի զինվորական հրամանատարությունն ամբողջովին անցել է տեր Ավետիսի ձեռքը:
բ. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը ստեղծվել է 1881թ.՝ Խաչատուր Կերեքցյանի ջանքերով:
գ. Ժողովրդավարական հեղափոխությունը Ռուսաստանում սկսվեց 1905 թ. հունվարի 9–ին՝ Պետերբուրգում բանվորների խաղաղ ցույցի գնդակոծությամբ:
դ. 1917 թ. դեկտեմբերի 5–ին ընդունվեց «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը:
ե. 1920 թ. նոյեմբերի 13–ին ստորագրվեց հայ–վրացական համաձայնագիր «Լոռու չեզոք գոտի» ժամանակավորապես վրացական զորքեր մտցնելու մասին:
զ. 1990 թ. փետրվարի 20–ին ԼՂԻՄ մարզխորհրդի 67 պատգամավորներ գրավոր պահանջեցին հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան:
է. 2009 թ. հոկտեմբերի 10–ին Ստամբուլում ՀՀ–ի և Թուրքիայի միջև ստորագրվեցին «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին» արձանագրությունները:

1) ա, զ, է
2) բ, դ, է
3) ա, ե, զ
4) բ, գ, ե

56 **Թվարկվածներից որո՞նք են 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի հետևանքներ.**

ա. Հայաստանը վճռական պահին օգնության հասավ Ռուսաստանին, որը շարունակում էր կռվել թուրքերի դեմ:
բ. Դրվեց ամբողջական հայրենիքի վերականգնման ճանապարհի սկիզբը:
գ. Դրական դեր խաղաց թուրքերի դեմ պայքարում Անդրկովկասի ժողովուրդների փոխհամաձայնեցված ու համատեղ պայքարը խրախուսելու համար:
դ. Բնաջնջումից փրկվեցին Անդրկովկասի ժողովուրդները:
ե. Թուրքական կողմը ստիպված եղավ մեղմացնել պահանջները և նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետ կնքել Բաթումի հաշտության պայմանագիրը:
զ. Նորահռչակ հայկական պետությունը դարձավ աշխարհամարտի մասնակից կողմ և այս հիմքի վրա իրավական (դե յուրե) ճանաչում ստացավ Անտանտի երկրների կողմից:
է. Հայությունը հնարավորություն ստացավ պարտված թշնամուն թելադրելու հաշտության սեփական պայմանները:

1) բ, ե, զ
2) գ, դ, զ
3) ա, բ, է
4) բ, դ, ե

57 **Կատարել համապատասխանեցում.**

Ռեժիսոր	Կինոնկար
1. Ամասի Մարտիրոսյան	ա. «Տղամարդիկ»
2. Ներսես Հովհաննիսյան	բ. «Երկունք»
3. Արման Մանարյան	գ. «Ոսկե հորթ»
4. Ֆրունզե Դովլաթյան	դ. «Տժվժիկ»
5. Մոկո Հակոբյան	ե. «Հարսնացուն հյուսիսից»
6. Էդմոնդ Քեոսայան	զ. «01–99»
	է. «Ոսկե ցլիկ»

1) 1–ե, 2–ա, 3–զ, 4–դ, 5–գ, 6–բ
2) 1–զ, 2–ե, 3–գ, 4–է, 5–բ, 6–ա
3) 1–զ, 2–ե, 3–դ, 4–բ, 5–է, 6–ա
4) 1–է, 2–զ, 3–ա, 4–ե, 5–գ, 6–բ

58 **Գտնել սխալ պնդումները.**

ա. Միհրդատ Իբերացուց հայոց գահը բռնազավթել է նրա եղբորորդի Հռադամիզդը:
բ. Սոհեմոս–Տիգրանին Հայաստանից վտարելուց հետո գահը հանձնվել է Խոսրով I–ին:
գ. Տրդատ II–ին հաջորդած Արտավազդից հետո հայոց գահն անցնում է Խոսրով II–ին:
դ. Արտաշատի պայմանագրի կնքումից հետո պարթևները հետ ստացան Կորդուքն ու Հյուսիսային Միջագետքը:
ե. Երբ Մարկոս Կրասոսը ժամանեց Ասորիք, Արտավազդ II-ը եկավ նրա մոտ և առաջարկեց պարթևների դեմ արշավանքը սկսել Հայաստանի հարավային լեռնոտ շրջաններով:
զ. Տիգրան III–ը Հռոմի ցանկությամբ հայոց գահը կտակեց իր որդի Տիգրան IV–ին:
է. Հռոմեական զորավար Կորբուլոնը, գրավելով Արտաշատ մայրաքաղաքը, հրամայում է քանդել այն:

1) բ, դ, զ
2) ա, ե, է
3) ա, գ, զ
4) բ, գ, դ

59 **Թվարկված որոշումներից առանձնացնել երեքը, որոնք ընդունվել են Աշտիշատի ժողովում.**

ա. Թագավորն ու մեծամեծները թող գթասիրտ լինեն իրենց ծառաների և ստորադրյալների նկատմամբ, սիրեն նրանց՝ որպես իրենց ընտանիքի անդամների:
բ. Կաթողիկոսը թեմական եպիսկոպոսներ նշանակելիս պետք է հաշվի առնի միայն աշխարհատեր և աշխարհական նախարարների առաջարկները:
գ. Կաթողիկոսը թեմական եպիսկոպոսներ նշանակելիս պետք է հաշվի առնի ոչ միայն աշխարհատեր և աշխարհական, այլև գավառատեր և գավառական նախարարների առաջարկները:
դ. Թագավորն ու մեծամեծները անօրեն կերպով և չափազանց մեծ հարկերով չնեղեն հասարակ ժողովրդին:
ե. Թագավորն ու մեծամեծները թող գյուղական եկեղեցիների քահանաներին բոլոր ազարակ տեղերում տան երկուական, իսկ ավաններում՝ չորսական ծխի հողաբաժին:
զ. Թագավորն ու մեծամեծները թող զանազան գավառներից հավաքված մանուկներ ուղարկեն կաթողիկոսարան՝ Ավետարանի խոսքը ժողովրդին մատչելի դարձնելու համար հայերենի հմուտ թարգմանիչներ պատրաստելու նպատակով:
է. Ծառաները թող հնազանդ և հավատարիմ մնան իրենց տերերին:

1) բ, զ, է
2) ա, դ, է
3) ա, ե, է
4) ա, գ, ե

60 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

1) 1922 թ. կազմավորված «Երեքի» խմբակի հրապարակած փաստաթուղթը կոչվում էր «Երեքի դեկրետ»:
2) Քարվաճառի ազատագրման գործողությունը ստացավ «Հարսանիք լեռներում» անվանումը:
3) 1945 թ. ապրիլին Սան Ֆրանցիսկոյում գումարվող Միավորված ազգերի կազմակերպության անդրանիկ կոնֆերանսին Հայկական հարցի լուծման խնդրանքով հուշագրեր ներկայացրած կազմակերպություններն էին Հայկական ազգային կոմիտեն և Ամերիկայի Հայկական ազգային խորհուրդը:
4) Երկրորդ աշխարհամարտից հետո սփյուռքահայության ներգաղթը Հայաստան կազմակերպելու համար հանրապետության կառավարությանն առընթեր կազ-մակերպված մարմինը կոչվում էր Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտե:
5) ՀԲԸՄ նշանակում է Հայկական բարեկամական ընկերակցությունների միություն:
6) ԱՄՆ–ում դաշնակցության ստեղծած Հայկական ազգային կոմիտեն նաև կոչվում է Հայ դատի հանձնախումբ:
7) 1920–ական թթ. Հայաստանում գրական շարժման մեջ ծավալված ուղղությունը հայտնի է պրոլետկուլտ անունով:

61 **Գտնել ճիշտ պատասխանները.**

Ի՞նչ հետևանքներ ունեցավ Պոնտոսի համար Ք. ա. 94 թ. Արտաշատում Հայաստանի հետ կնքած պայմանագիրը:

1) Կորդուքի վրա հարձակումից հետո Պոնտոսին անցավ անշարժ գույքը:
2) Պայմանագիրը դարձավ Միհրդատ Պոնտացու սպանության առիթ:
3) Կապադովկիայի վրա հարձակումից հետո Պոնտոսին անցավ շարժական գույքը:
4) Կապադովկիայի վրա հարձակումից հետո Պոնտոսին անցավ նրա տարածքը:
5) Ձեռք բերեց հուսալի դաշնակից:
6) Պոնտոսը գործողությունների ազատություն ստացավ արևմուտքում:
7) Կորդուքի վրա հարձակումից հետո Պոնտոսին անցավ շարժական գույքը:

62 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառահետևանքային կապեր.**

1) Հայ–վրացական զինակցության արդյունքում սելջուկների լծից ազատվեցին Հայաստանի կենտրոնական ու հարավային շրջանները:
2) Ժառանգական նախարարական խոշոր հողատիրության աճի հետևանքով թագավորական հողատիրությունը կրճատվում և ամփոփվում էր Միջնաշխարհում գտնվող ոստանում:
3) Ավատատիրության խորացմամբ ծառայող ազնվականության հողատարածքները մասնատվում էին, ինչի հետևանքով մեծանում էին թագավորական, պետական հողերը:
4) Նախարարների հետ Տիրանի ունեցած բարդ հարաբերությունների հետևանքով կորուստներ կրեցին Արծրունյաց և Բզնունյաց նախարարական տոհմերը:
5) Թեոդորոս Ռշտունուն ազատ արձակելու պատճառը Հայաստանը Բյուզանդական կայսրության ոլորտում պահելն էր:
6) Զաբելի և Հեթումի ամուսնությամբ վերջապես լուծվեց Կիլիկյան Հայաստանի գահակալության խնդիրը, և հիմք դրվեց Հեթումյանների արքայատոհմին:
7) Սելջուկների տիրապետության հաստատման հետևանքով Հայաստանի տարածքում ստեղծվեցին Երզնկայի, Տևրիկի, Կեսարիայի և Ադանայի սելջուկյան իշխանությունները:

63 **Ընտրել սխալ պնդումները.**

1) Երիտթուրքերի կողմից ֆրանսիական հեղափոխությունից ընդօրինակած «ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսներն այդպես էլ մնացին թղթի վրա:
2) Դաշնակցությունն իր նոր ծրագրում (1907 թ.) ավելի ընդգծեց կուսակցության սոցիալիստական (ընկերվարական) գաղափարախոսությունը:
3) Դաշնակցությունն իր նոր ծրագրում (1907 թ.) ազգային–քաղաքական պահանջների տեսակետից առաջադրեց Արևմտյան Հայաստանի լիակատար անկախության պահանջը:
4) Անդրանիկը դեմ էր պարտիզանական, անհատական պայքարին և հաղթանակի հասնելու միակ ուղին համարում էր ժողովրդին համընդհանուր ապստամբության նախապատրաստելը:
5) 1907 թ. դեկտեմբերին Փարիզում տեղի ունեցած Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ համաժողովը որոշեց մինչև 1909 թ. զինված ապստամբության միջոցով տապալել Համիդյան բռնապետությունը և հաստատել սահմանադրական կարգեր:
6) ՀՅԴ–ն, հարաբերություններ հաստատելով երիտթուրքերի հետ, անհրաժեշտ էր համարում սուլթանական բռնակալության դեմ պայքարում համագործակցել հատկապես հույն նարոդնիկների հետ:
7) Իշխանության գալով՝ երիտթուրքերը ոչ միայն սահմանադրական քիչ թե շատ էական բարեփոխումներ չիրագործեցին, այլև ավելի վատթար կերպով շարունակեցին սուլթան Աբդուլ Համիդի որդեգրած հակահայ քաղաքակա-նությունը:

64 **Բերված փաստարկներից որո՞նք են սխալ.**

1) Հայրենական պատերազմին նվիրված պիեսներից էր Գուրգեն Բորյանի «Բարձունքներում» դրաման, որը ներկայացվել է հայկական գրեթե բոլոր թատրոններում:
2) 1924 թ. Ղրիմից Հայաստան տեղափոխված մեծանուն կոմպոզիտոր Ա. Սպենդիարյանը դրեց հայկական ազգային սիմֆոնիզմի հիմքը:
3) Հայ երաժշտական արվեստի նշանավոր ներկայացուցիչներից էին Շարա Տալյանը, Հայկանուշ Դանիելյանը և ուրիշներ. ընդ որում՝ Հ. Դանիելյանին առաջինը շնորհվեց ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհու կոչում:
4) 1933 թ. հանրապետությունում գործում էին շուրջ 40 ինքնուրույն գիտահետազոտական հիմնարկներ:
5) 1934 թ. «Նամուս» կինոնկարով ամփոփվեց հայկինոյի համր շրջանը:
6) 1935 թ. ստեղծվել է Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միությունը:
7) 1941 թ. Արմֆանի կազմում գործում էին 112 գիտահետազոտական հիմնարկներ:

65 **Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Բագրատունիների հայկական պետության կործանումը
2) սելջուկ–թուրքերի առաջին արշավանքը Հայաստան
3) սելջուկ–թուրքերի երկրորդ արշավանքը Հայաստան
4) Ծումբի ճակատամարտը
5) Շահապիվանի եկեղեցական ժողովը
6) Անիի գրավումը Ալփ–Ասլանի կողմից
7) Մանազկերտի ճակատամարտը
8) Դվինի ազատագրումը Զաքարյանների կողմից

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Հռոմում կայսերական վարչակարգի հիմնումը
2) Պետոս զորավարի ժամանումը Կապադովկիա
3) Տիգրան VI–ին գահընկեց անելը
4) Արտավազդ IV–ի գահակալումը Հայաստանում
5) Սուլլայի զորքերի մուտքը Կապադովկիա
6) Մծուրք քաղաքի հիմնադրումը

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Հայաստանի դառնալը ՄԱԿ–ի լիիրավ անդամ
2) ՀՀ–ում բազմակուսակցական համակարգ ստեղծելու մասին օրենքի ընդունումը
3) Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ստեղծումը
4) ՀՀ Գերագույն խորհրդի վերանվանվելը Ազգային ժողովի
5) ՀՀ–ում առաջին նախագահական ընտրությունների անցկացումը
6) ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը

68 **Կատարել համապատասխանեցում.**

ա. Հայկ
բ. Տիր
գ. Արա
դ. Արեգ–Միհր
ե. Տորք
զ. Աստղիկ

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

1) Նա համարվել է գրի և գրականության, արվեստի և գիտության հովանավոր աստվածը:
2) Նա համարվել է արևի, լույսի, կրակի և արդարության աստվածը:
3) Նա համարվել է ռազմի, քաջության և ամպրոպի աստվածը:
4) Նրա անունով է կոչվել Օրիոն համաստեղությունը:
5) Նա համարվել է լույսի, սիրո և գեղեցկության դիցուհին:
6) Նրա պաշտամունքը կապված է եղել երկրագործության, ցանքի և գարնան աճող բուսականության հետ:
7) Նրա անունը տոտեմական ծագում ունի և կապված է անգղ թռչունի հետ:

69 **Մասնագիտությունները համապատասխանեցնել գործիչների անուններին.**

ա. Անդրեաս Արծրունի
բ. Մարի Բրոսե
գ. Ջակոմո (Հակոբ) Չամչյան
դ. Միհրան Ղասաբյան
ե. Խորեն Սինանյան
զ. Լևոն Օրբելի

1) պատմաբան, բանասեր
2) աստղագետ
3) քիմիկոս
4) արևելագետ
5) ռենտգենաբան
6) ֆիզիոլոգ
7) երկրաբան, բյուրեղաքիմիկոս

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ պատասխաններից որևէ մեկը:**

1) Կիլիկիայի հայկական պետության և Անտիոքի իշխանության միջև խնդիրներ ծագեցին Դաշտային Կիլիկիայի արևմտյան շրջանների պատճառով:
2) Լևոն II իշխանի և Բոհեմունդ II–ի միջև հաշտության պայմանագիր կնքվեց Սիս քաղաքում:
3) Պայմանագրի համաձայն՝ Բոհեմունդը հսկայական փրկագին պետք է վճարեր իր ազատության համար:
4) Բոհեմունդի ժառանգորդ Ֆիլիպի և Ստեփանեի որդի Ռուբենի դուստր Ալիսի արու զավակը պետք է ժառանգեր Անտիոքը և Կիլիկյան Հայաստանը:
5) Անտիոքի և Կիլիկիայի միավորմամբ Լևոնը փորձում էր ստեղծել հայ–խաչակրաց միացյալ պետություն:
6) Բյուզանդական տիրապետության վերջին հենակետերը Կիլիկիայում վերացրել է Լևոն Մեծագործը: